ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

«ՄՈՒՐՃ»-Ի ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐԻՆ։ Ներկայ համարը հրատարակելուց յետ՝ սկսւում է «Մուրճ» ամսագրին 1892 թուականի համար բաժանորդ գրուելու շրջանը։ Այս համարի մէջ դրուած ուղարկում ենք մեր բոլոր հեռաւոր բաժանորդներին տպագրուած երկու-երկու ծրարներ տպագրուած թերթիկներով հանդերձ, առաջուայ տարիների նման, խնդրելով որ երկու ծրարներից մէկը ծանօթ շրջաններում տարածեն։ Բաժանորդ գրուելու համար կարելի է կամ ուղղակի խմբագրութեանը դիմել կամ գրուել «Մուրճ»-ի գործակալների մօտ, որոնց անունները տպւած են «Մուրճ»-ի երեսի թղթի վերայ։

ՄԱՐԿ ՏՈՒԷՆԸ «Մուրճ»-ում։ Ներկայ համարում ապւած զրոյցով վերջացնում ենք Մարկ Տուէնի հումորիստական գրւածների շարքը «Մուրճ»-ում։ Մինչ այժմ տպած լինը կտորները, որոնց թարգմանողն է պ. Ալ. Բալանթարը, չուտով լոյս կը տեսնեն առանձին գրքոյկով։

«ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՐԹՈՒԹԵԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ ՖՐԱՆՍԻԱՑՈՒՄ» վերնագրով յօդւածը, որ մենք չատպում ենք տպագրել ներկայ համարում, ուղարկել է մեզ պ. Կարապետ Հայրապետեանց, որ թարգմանել է այդ յօդւածը Русская школа ամսագրից։ Այդ յօդւածի վերայ մենք դարձնում ենք մեր ժողովրդական կրթութեան գործին հետաքրքրւածների առանձին ուշադրութիւնը։

ՎՐԻՊԱԿՆԵՐ։ Պր. Կիւլպէնկեանի յօդւածում № 9, երես 1065, տող 19—20 տպւած է՝ «...մինչդեռ Բալախանէն մօտաւորապէս 50 մետր լայնութիւն ունի։ Պէտք է լինէր՝ մինչդեռ Բալախանէն մօտաւորապէս 50 մետր ծովի մակերեսոյթից բարձր է»։

ՀՐԱՊԱՐԱԿԱԽՕՍԱԿԱՆ ՄՈԼՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ։ Կան հրապարակախօսներ, որոնք իրանց քարոզների հետևանքները այժմեանից չեն հասկանում, որովհետև ընդունակութիւնից զուրկ են երևոյթների իրար հետ ունեցած կապը հասկանալ. բայց այն չարիքը, որ գոյանում է գորանով—տուժում են հասարակաց կարծիքի մա-

սին գաղափար անգամ չունեցող մշակները, հողագործները, որոնք մի ազգի գլխաւոր մարմինն են կազմում։ Արասխանեանցին հակառակելու ցանկութիւնով կոչրացած պ. Գրիգոր Արծրունին արդէն տարիներով, բարեբաղդաբար դեռ ևս անպտուղ՝ աշխատում է որ մեր երկրի հողագործների մի անգին մասի գլխաւոր կամ մինչև անգամ միակ ապրուստի աղբիւրը, հացահատիկների մշակութիւնը՝ սահմանափակի, և որ հացահատիկների արտահանութիւնը մեր երկրից արգելի։ Այդ կը լինի հետևանքը, եթէ միայն պ. Արծրունու տարիներով քարոզող մտքերը հացի առուտուրի մասին մտնեն հասարակաց գիտակցութեան մէջ և եթէ երկրիս կառավարութիւնը նոյն թէորիաներին հետևի։ Այլապէս չի կարելի հասկանալ այն եռանդը, որ նա ցոյց է տալիս Արասխանեանցի դէմ, որը ուրախութիւն է չալտնել հացահատիկների արտահանութեան և, իբր գորա հետևանք՝ հացահատիկների դների բարձրանալու համար և որը այդ հիմոն վերալ վստահացել է գուշակել, որ մեր գիւղացիները այլևս չահ կ'ունենան իրանց հողագործական մշակութիւնը աւելի ընդարձակել։ Իսկ եթէ ճիշտ է որ պ. Արծրունու կատաղութիւնը հացահատիկների գործի այս նոր ուղղութեան դէմ ուրիշ ոչ մի դրական հետեանք չի կարող ունենալ, քան այն, որ, հասարակաց կարծիքին հետևելով, նաև տէրութիւնը առ միշտ արգելի մեր երկրից հացահատիկներ արտահանել— այն ժամանակ մենք հարցնում ենք՝ ինչ բարոյական իրաւունք ունէք բողոքել պանդխտութեան և գաղթականութիւնների դէմ, քանի որ դուք ինքներդ ձեր քարոզներով անհնարին դրութիւն էք ուզում ստեղծել գիւղացու համար գիւղում մնալու։ Եւ ինչ կալ աւելի վատ դրութիւն հացաբեր գիւղերի բնակիչների համար, քան երբ սոքա ընկած կը տեսնեն իրանց հողի արդիւնքի գները։ Ապասենք որ մի օր այդ նոյն քարոզները մարմին առնեն հասարակաց կարծիքի մէջ։ Իսկ մինչև որ այդ չի կատարուել, մենք մեր բարոյական պարտքն ենք համարում բողոքել այն վտանգաւոր հաւեացքների դէմ որոնք ժողովրդական չահերի հակառակ ուղղութիւն ունին։

Խմբագիր-Հրատարակիչ՝ ԱՒԵՏԻՔ ԱՐԱՍԽԱՆԵԱՆՑ։